սից 'ի վերայ անհնազանդելոց, եւ կապանօք առաքել 'ի Դուռն։ Այլ այսու եւս անհնարին եղեւ բառնալ զխռովութիւնն, զի Յոյնք դարձեալ խնդրեցին հրովարտակ Յարքայէ, 'ի բաց առնուլ զառաջին և զերկրորդ հրովարտակս 'ի ձեռաց Հայոց և Յունաց՝ եւ պատառել զնոսա, և ջնջել զարձանագրութիւնս նոցին, չվիճել այլ եւս վասն տօնի Զատկին, և սպառնալիք պատուհասի՝ 'ի վերայ անհնազանդից. իսկ դատաւորք և գործավարք տէրութեան, 'ի ժամանակի խռովութեան յայնմիկ, եթէ առեալ իցեն յումեքէ դրամս ինչ տուգանօք, դարձուցեն յետս առ տեարս իւրեանց, և ինքեանք զրկեալ 'ի պաշտօնէ՝ դատապարտեսցին յաքսորս՝ արդելեալ 'ի բերդս։ Եւ առիթն խռովութեան ժանտադործ այրն Եուսուֆ՝ ուր և գոցի, առցի 'ի ձեռաց Նորա հրովարտակն եւ պատառեսցի. զի այսմ վերջին հրովարտակիս՝ հաճեցան Հայք և Յոյնք. զի օր յառաջ բարձցի եւ անհետացի խռովութիւնն 'ի միջոյ երկուց ազգաց։

Ի հասանիլ այսր հրովարտակի առ դատաւորս քաղաքաց, արարին ըստ հրամանի Արքային, և բարձաւ խռովութիւնն յարեւելս, և ժողովուրդք սկսան վարիլ սիրով և խաղաղութեամբ ընդ միմեանս։

Այս ամենայն անցք, որք անցին յարեւելս 'ի միջի Հայ և Յոյն ժողովրդոց, հանդամանօք պատմին 'ի գիրս դատաւորաց այլ և այլ քաղաքաց և 'ի Կայսերական հրովարտակս, որք ամբողջ պահին 'ի շարս գրոց Ս. Աթոռոյն, յորոց քաղեալ համառօտեցաք զպատմութիւնս։

Այն ինչ հանդարտեալ էր Գրիգոր Պատրիարք 'ի չփոթութենէ Ծռաղատկի եւ յաղմկեալ խռովութենէ ժողովրդոց յարեւելս, և կամէր հանդարտիլ և խնամել զիւրսն, յարեւաւ այլ իմն խռովութիւն 'ի նմին իսկ յԵրուսաղէմ քաղաքի. զի Լատին կղերք սկսան հակառակիլ և վիճել ընդ Հայոց վասն Պատանատեղւոյն Քրիստոսի 'ի Ս. Յարութիւն, և ջանային արգելուլ զնոսա 'ի մասնակցութենէ նորին, բառնալ կամելով անտի զաշտանակս Հայոց։

Եւ եղեւ յընդդիմանալ Գրիգորի Պատրիարքի, և առաջի առնել դատաւորաց զվաւերական գրեանս վասն այնր տեղւոյ, ծագեցաւ ատելութիւն 'ի միջ երկուց ազգաց,